

ՀԱՅԵՐԵՆԻ ԿԵՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՎԻՃԵԼԻ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Բաճախիչ. գիտ. դոկտոր Գ. Լ. ԳԱՐԵԳԻՆՅԱՆ

Ժամանակակից հայերենի կետադրությունը վերջին տասնամյակներում զգալի բարեփոխման է ենթարկվել. ընդհանուր առմամբ կանոնարկվել և կայունացել են տրոհության և բացահայտության շատ նշանների գործածության կոնկրետ դեպքերը, փորձեր են արվել և արվում միասնականացնելու դրանց կիրառությունները, կանխելու անմիօրինակությունները: Այդ բոլորով հանդերձ, սակայն, դեռ այսօր էլ այնչափ շատ են այն դեպքերը, երբ բուժն ու ստորակետը, բուժն ու միջակետը, միջակետն ու ստորակետը, երբեմն նույնիսկ վերջակետն ու միջակետը որոշ կիրառություններում հանդես են գալիս որպես կետադրական յուրօրինակ համանիշներ՝ ծառայելով համանման շարահյուսական կառույցների տրոհմանը: Այս հանգամանքը, բնականաբար, չի նպաստում կետադրական տարբեր նշանների կիրառությունների սահմանազատմանը և լրջորեն խոչընդոտում է միասնական ու կայուն կետադրական համակարգ ունենալու խիստ կարևոր ու հրատապ խնդրին: Այն լրացուցիչ դժվարություններ է ստեղծում նաև հրատարակչական-խմբագրական աշխատանքների բնագավառում և մանավանդ դպրոցական ուսուցման ոլորտում:

Այս վիճակը հիմնականում արդյունք է այն բանի, որ հայ քերականագիտության մեջ դեռևս բացակայում է որևէ քիչ թե շատ լուրջ ուսումնասիրություն՝ նվիրված ժամանակակից հայերենի կետադրության տեսական և գործնական խնդիրների քննությանն ու մշակմանը: Փաստորեն կետադրության, հաճախ խիստ բարդ ու խրթին, հարցերը այսօր ըստ էության կանոնավորվում են սոսկ դպրոցական շարահյուսության դասագրքերում ցրված կանոններով ու բացատրություններով, որոնք, հասկանալի պատճառներով, արտացոլում են սոսկ կետադրական նշանների հիմնական կիրառությունները, այն էլ ամենաընդհանուր գծերով միայն: Մինչդեռ բավական մեծ թիվ են կազմում այն շարահյուսական կառույցները, որոնց բաղադրիչների կետադրությունը կարգավորելու համար բացակայում են համապատասխան կանոններ ու հանձնարարականներ, առանց որոնց անհնարին է ժամանակակից հայերենի կետադրության կուռ ու միասնական համակարգ ստեղծել:

Անշուշտ հանդուրժելի չէ, երբ նույնատիպ շարահյուսական կառույցները ներկայացվում են տարբեր կետադրմամբ, ըստ որում հաճախ նույն էջում նույն հեղինակի կողմից: Եվ դրա պատճառը ոչ միայն վերևում նշված հանձնարարականների բացակայությունն է, այլև արդեն իսկ հայտնի և յուրաքանչյուր շարահյուսության դասագրքում արձանագրված կանոնների անտեսումը: Առավել հաճախ կետադրական անմիօրինակություններ, հեղինակային ազատ մեկնաբանություններ և այլևայլ վրիպումներ հանդիպում են գեղարվեստական գրականության, քան լրագրության, հրապարակախոսության և գիտական գրականության լեզվում: Եվ դա, անշուշտ, հասկանալի է: Գեղարվեստական խոսքի մշակները ինչ-որ չափով իրենց ավելի «արտոնյալ» են զգում իրենց «պարտադրված» կետադրական «կապանքներին» գերի չդառնալու հարցում, ավելի ազատ ու անկաշկանդ մոտեցում են ցուցաբերում գործող կանոնների մեկնաբանման խնդրում: Սակայն նման մոտեցումը կարող է ընդունելի լինել միայն այն դեպքում, երբ այդ ճշգրտումներն ու վրիպումները ոճական կամ իմաստային ինչ-որ երանգների արտահայտման միջոց են դառնում, արտահայտչական նոր արժեք են ձեռք բերում, առանց սակայն կոպտորեն խախտելու կետադրության ընդունված հիմնական կանոններն ու սկզբունքները: Այս հարցում իրենց վճռական խոսքն ունեն ասելու մասնագետ խմբագիրներն ու սրբագրիչները:

Այսպիսով, ժամանակակից հայերենի կետադրության ոլորտում տիրող այս ոչ այնքան էլ միաթարական վիճակը, անմիօրինակություններն ու երկդիմությունները հիմնականում արդյունք են ա) որոշ շարահյուսական կառույցների և մասնակի այլ դեպքերի վերաբերյալ հստակ ու միանշանակ կանոնների ու հանձնարարականների բացակայության և բ) արդեն իսկ հայտնի և գործող կանոնների անտեսման:

Առաջմ միակ աշխատանքը, ուր քիչ թե շատ հանգամանորեն, դասագրքային սահմաններից դուրս գալով, փորձ է արված համակարգելու ժամանակակից հայերենի կետադրական նշանների գործածությունները և գործնականորեն նպաստելու դրանց կիրառությունների կայունացմանը, լույս է տեսել 1957 թ.¹: Այս ուղեցույցը, սակայն, որևէ էական դեր չխաղաց այս հարցում, կարծես նույնիսկ անուշադրության մատնվեց. նրանում առաջարկված ընդունելի շատ հանձնարարականներ հետևորդներ չգտան: Միաժամանակ պետք է նշել, որ մեզ հուզող շատ խնդիրներ, երկդիմության ու անմիօրինակության շատ դեպքեր այստեղ ներկայացված և քննված չեն: Բացի դրանից, այդ աշխատանքում ինչ-որ չափով զգացվում է նաև ուսերենի կետադրական կանոնների որոշ ազդեցությունը:

Հաջորդ աշխատանքը, ուր, դպրոցական ծրագրի սահմաններից դուրս, քննության առարկա են դարձել հայերենի կետադրության գործնական խնդիրները, մեր բուհական դասագիրքն է²: Այստեղ ևս, աշխատանքի բնույթից ելնելով, ներկայացված են կետադրության նշանների հիմնական գործածությունները, սակայն միաժամանակ արձանագրվում են գրավոր խոսքում առկա կետադրական անմիօրինակությունների շատ դեպքեր, և հաճախ տրվում են համապատասխան հանձնարարականներ՝ շարահյուսական որոշ կառույցների կետադրության միասնականությունը ապահովելու համար:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հրապարակի վրա չկա որևէ քիչ թե շատ լուրջ ուսումնասիրություն՝ նվիրված ժամանակակից հայերենի կետադրության ինչպես տեսական, այնպես էլ գործնական խնդիրների քննությանը³: Ուստի և անհետաձգելի ու հրատապ է գործնական արժեք ունեցող, գործնական նպատակներ հետապնդող մի այնպիսի ուղեցույցի կազմումը, որը, հաշվի առնելով վերջին տասնամյակներում կետադրական նշանների գործածության մեջ նկատվող որոշակի տեղաշարժերը, ճշտումները և մանավանդ զարգացման միտումները, ամփոփեր ու ընդհանրացներ հայերենի կետադրության ընդհանուր սկզբունքները, համակարգեր յուրաքանչյուր կետադրական նշանի (մանավանդ տրոհության) գործածության կոնկրետ դեպքերը, հնարավորին չափ սահմանափակեր այդ նշանների համանիշային գործածությունները, նվազագույնի հասցներ նույնատիպ շարահյուսական կառույցների կետադրման անմիօրինակությունները, երկակիությունները (եթե դրանք իմաստային տարբեր երանգների ու ոճական տարբեր արժեքների արտահայտման նպատակ չեն հետապնդում), միով բանիվ երևան հաներ, բացահայտեր, արձանագրեր և կանոնարկեր կետադրական նշանների գործածության բոլոր հնարավոր դեպքերը և մանավանդ այն դեպքերը, որոնց իրենց արտացոլումը չեն գտել, հետևաբար և իրենց կետադրական հանձնարարականը չեն ստացել հրապարակի վրա եղած աշխատանքներում: Առանց նման լուրջ ու մանրակրկիտ քննության անհնարին է կարգավորել ժամանակակից հայերենի կետադրության հարցերը, խուսափել անմիօրինակությունից, կետադրական խառնաշփոթից:

¹ Ա. Ղարիբյան, Գ. Պարիս. Հայոց լեզվի քերականության, ուղղագրության և կետադրության ուղեցույց. Երևան, 1957:

² Գ. Գաբրիելյան. Ժամանակակից հայոց լեզու. Բարդ նախադասություն. Երևան, 1984:

³ Ռուսերենի կետադրության վերաբերյալ կան բազմաթիվ ուսումնասիրություններ, ուղեցույցներ, հոդվածներ, ծանրակշիռ տեսական հետազոտություններ, սակայն, դրանով հանդերձ, ռուս քերականները դեռևս են, որ իրենց լեզվի կետադրության հարցերը անհրաժեշտ խորությամբ քննված չեն:

Անշուշտ, անհնարին է հասնել կետադրական կանոնների գործածության յիսակատար միասնականությանը, և դրա անհրաժեշտությունն էլ չկա: Կետադրական համակարգը չպետք է զրկել իր ճկունությունից, առանց որի անհնարին կլինի արտահայտել իմաստային և ոճական շատ երանգներ ու ներդրանգներ: Կետադրական որոշ տարբերակների պահպանումը, «հանդուրժումը» կենդանություն է տալիս խոսքին՝ օժտելով նրան արտահայտչական նոր հնարավորություններով: Սակայն, ինչպես ասել ենք, անհրաժեշտ է խստորեն պահպանել կետադրական կանոնների ընդհանուր և հիմնական սկզբունքները և տուրք չտալ անհատական, հեղինակային նորամուծություններին: Այսպես, վերջերս հաճախացել են մերժելի այն դեպքերը, երբ շաղկապով կամ հարաբերական դերանվամբ սկսվող երկրորդական անջատում են գլխավորից ոչ թե ստորակետով, այլ բուլով, ինչպես՝ Երբ արթնացա՝ լուսաստղը չկար (ԽԴՈԿ, 32): Հրանտ Քառյանը ծիծաղեց մինչև արտասուք, հետո նորից սկսեց և ծիծաղելով մտածեց, որ սիրում է այդ կայարանը, այդ հանգուցը՝ որի դարակներում մի կոպեկ փող չկա, այդ հեռախոսավարուհին՝ որ տանը մի շորս երեխա ունի (ՀՄԵ, I, 210): Կամ էլ՝ երբ բուն բացահայտիչը բացահայտյալից բուլի փոխարեն անջատում են ստորակետով կամ խուսափում են այդ նույն բացահայտիչից հետո ստորակետ դնել, երբ այն այնքան էլ ծավալուն չէ: Ինչպես ասել ենք, կետադրական տարբերակները կարող են արդարանալ միայն այն դեպքում, եթե նրանք իմաստային և ոճական տարբեր արժեքներ են կրում: Մյուս բոլոր դեպքերում այդ տարբերակները մերժելի են:

Ի թիվս այն շարահյուսական կառույցների, որոնց բաղադրիչների կետադրությունը միօրինակ չէ լեզվում և կարող է հստակ ու որոշակի կանոնարկման, աչքի են ընկնում մասնավորապես նրանք, որոնց բաղադրիչները կապվում են մեծադիր (և ոչ կրկնադիր) և, ու, կամ շաղկապներով: Այս դեպքում որոշակի բարդություն է ներկայացնում այն հարցը, թե ո՞ր դեպքում պետք է ստորակետ դնել այդ շաղկապներից առաջ և ո՞ր դեպքում՝ ոչ: Առաջին հայացքից թվում է, թե խնդիրը կանոնավորվում է յուրաքանչյուր դպրոցական դասագրքում առկա և յուրաքանչյուր աշակերտի հայտնի այն կանոնով, ըստ որի և, ու, կամ շաղկապներից առաջ ստորակետ չի դրվում, եթե նրանցով կապված համադաս նախադասությունները ընդհանուր ենթակա ունեն, իսկ եթե այդ համադաս նախադասությունները տարբեր ենթականեր ունեն (այսինքն ընդհանուր ենթակայով չեն), ապա նշված շաղկապներից առաջ ստորակետ դրվում է: Պետք է սակայն ասել, որ այս կանոնը, խիստ ընդհանուր լինելով, բնականաբար չի ընդգրկում և չի կարող ընդգրկել այն բոլոր հնարավոր և լեզվում լայն տարածում ունեցող շարահյուսական կառույցները, որոնցում հանդես են գալիս նշված շաղկապները: Այդ սահմանումը գրեթե բացառապես վերաբերում է «Սուրենը դուրս եկավ տնից և շտապեց գրադարան» և «Անձրևը դադարեց, և ես շարունակեցի ճանապարհ» տիպի անխառն բարդ համադասական այն նախադասություններին, որոնց բաղադրիչ նախադասությունները երկկազմ են, և չի վերաբերում այն բարդ համադասական նախադասություններին, որոնք կազմված են միակազմ բաղադրիչներից կամ միակազմ-երկկազմ բաղադրիչներից:

Բացի այս հանգամանքից, համընդհանուր ճանաչում գտած և այլ լեզուներում ևս գործող այս հայտնի կանոնը հայ քերականների կողմից ներկայացված է էական որոշ տարբերություններով (հատկապես այն հարցում, թե այս կանոնը համադասական ո՞ր շաղկապների վրա է տարածվում), որոնք լրացուցիչ դժվարություններ են ստեղծում միասնական մոտեցում ցուցաբերելու հարցում: Ներկայացնենք այս կանոնը տարբեր քերականների ձևակերպմամբ:

1) Մ. Արեգյան. — «Ստորակետ դրվում է՝ 1. Համադաս բառերի կամ խոսքի բազմակի մասերի միջև, երբ և շաղկապով չեն կապված...

2. ա) Համադաս խոսքերից միավորյալ խոսքի բայերից վերջինը, ինչպես և խոսքի բազմակի մասերից վերջինը, երբ կապակցված են և (ու)

շաղկապով, ստորակետով չեն բաժանվում: Բայց երբ հաջորդ խոսքի ենթական փոխվում է, կամ և, ու կրկնվում են բոլոր համադաս խոսքերի կամ խոսքի բազմակի մասերի սկզբում, այս շաղկապներից առաջ ևս դրվում է ստորակետ... Բ) Կամ շաղկապից առաջ ոչ մի կետ չի դրվում, երբ դործ է ածվում բացատրական նշանակությամբ, ինչպես՝ Հրազդան կամ Զանգու..., կամ երբ կապում է երկու բառ ոչ այնքան ներհակական փոխական նշանակությամբ, որքան ցույց տալով երկու բանի մեջ ըստ հաճույս ընտրություն...⁴:

Ի դեպ, հենց այս № 1 կետի կանոնը այնպես է ձևակերպված, որ նույն այդ կանոնում օգտագործված կամ շաղկապից առաջ պետք է ստորակետ դրվեր, որը, սակայն, դրված չէ:

2) Գ. Սևակ.—«Ստորակետ դրվում է՝... Բ) Համադաս նախադասությունների միջև, երբ սրանք չունեն համադասական շաղկապներ կամ կապակցված են բայց, իսկ, սակայն շաղկապներով: Երբ համադասական նախադասությունները կապակցված են և շաղկապով, բայց ունեն տարբեր ենթականեր, և շաղկապից առաջ դրվում է ստորակետ... Գ) Նախադասության համադոր անդամների միջև, երբ սրանք չեն կապակցվում և կամ ու շաղկապներով»⁵:

Ահաջող ձևակերպման պատճառով ստացվում է, որ համադաս նախադասությունների միջև ստորակետ կարող է դրվել միայն բայց, իսկ, սակայն համադասական շաղկապներից առաջ, իսկ մյուսներից առաջ՝ ոչ: Այնուհետև, Գ) կետում ասվածից հետևում է, որ նախադասության համադոր անդամների միջև ստորակետ չպետք է դնել, եթե նրանք կապված են և, ու շաղկապներով: Իսկ կամ շաղկապը: Չէ՞ որ այդ նույն դասագրքում այդ շաղկապից առաջ ոչ մի տեղ ստորակետ դրված չէ, երբ այն համադոր անդամներ է կապում: Թերի է նաև Բ) կետի բացատրությունը, ուր ասված է, որ և շաղկապից առաջ ստորակետ կարող է դրվել միայն այն դեպքում, երբ նրանով կապակցվող համադաս նախադասությունների ենթակաները տարբեր են (որով ակնարկվում է, որ ընդհանուր ենթականի առկայության դեպքում համադաս նախադասությունների միջև ստորակետ չի դրվում): Բայց մի՞թե նույն կանոնին չեն ենթարկվում, նույն վիճակում չեն ու, կամ շաղկապները, որոնք հիշատակված չեն (տե՛ս նույն Բ) կետի սահմանումը, ուր կամ շաղկապով կապակցված են ընդհանուր ենթակայով համադաս նախադասություններ, որոնք, սակայն, ստորակետով անջատված չեն. ի դեպ, հեղինակը կամ շաղկապից առաջ երբեք ստորակետ չի գնում նման կառույցներում):

3) Ա. Ղարիբյան, Գ. Պարիս.—«Եվ, ու, իսկ, բայց, սակայն, կամ, մեք...մեք, ոչ...ոչ, այնուամենայնիվ և նման շաղկապներով... միացած բարդ համադասական նախադասությունները բաժանվում են ստորակետերով»: «1. Նախադասության մեջ կարող են լինել մեկ ստորոգյալով բազմակի ենթականեր կամ մեկ ենթակայով բազմակի ստորոգյալներ: Այդպիսի ենթականերն ու ստորոգյալները իրարից անջատվում են ստորակետերով, եթե չեն միացված և, քե շաղկապներով... 2. Նախադասության մեջ կարող են լինել նաև մի քանի համասեռ երկրորդական անդամներ՝ համասեռ բազմակի լրացումներ (որոշիչներ, խնդիրներ, պարագաներ): Այդպիսի լրացումները միմյանցից բաժանվում են ստորակետով, եթե միացած չեն և, քե շաղկապներով»⁶:

Ինչպես տեսնում ենք, հեղինակները, հետևելով ողու քերականներին, նույն ենթակայով և բազմակի ստորոգյալներով կառույցները բարդ համադասական չեն համարում: Այնուհետև, ըստ բերված բացատրության, բազմակի ենթականերն ու ստորոգյալները ստորակետով չեն անջատվում, եթե

⁴ Մ. Աբեղյան. Հայոց լեզվի տեղաբնական. Երևան, 1965, էջ 679—680:

⁵ Գ. Սևակ. Հայոց լեզվի շարահյուսություն. Երևան, 1981, էջ 142:

⁶ Ա. Ղարիբյան, Գ. Պարիս. Նշվ. աշխ., էջ 302, 275:

կապակցված են և, քե շաղկապներով: Նախ՝ քե շաղկապից առաջ բացառիկ դեպքերում է ստորակետը բացակայում (ինչպես՝ մեծ քե փոքր), և երկրորդ՝ ստացվում է, որ ու, կամ շաղկապներից առաջ անհրաժեշտ է ստորակետ դնել, երբ նրանցով կապակցվում են բաղադրի ենթականեր, լրացումներ և ստորոգյալներ: Սակայն, մեկ այլ տեղում, ուրիշ կապակցությամբ՝ «Տրոհ-վող լրացումների կետագրությունը» բաժնում, հեղինակները հիշեցում են անում, որ «եթե կամ շաղկապը որպես միակի (այսինքն՝ մենագիր) անշատիշ շաղկապ դրված է նախադասության համասեռ անդամներին կից և նրանից հետո չի կարելի դնել այսինքն բառը, ապա ստորակետով չի բաժանվում» (էջ 298): Այս հանձնարարականը պետք է ընդհանուր կանոնում գտնել իր արտացոլումը, այսինքն 275 էջում:

4) Ս. Աբրահամյան.—«Ստորակետը դրվում է՝ ...Բ. Համադաս նախադասությունների միջև, որոնք կապված են և, ու, կամ շաղկապներով և չունեն ընդհանուր ենթակա... Գ. Նախադասության համադաս անդամների միջև, երբ սրանք կապակցված չեն և, ու, կամ շաղկապներով»:

Այս բացատրություններից հետևում է, որ եթե ընդհանուր ենթակա չունեցող համադաս նախադասությունները կապված են ոչ թե և, ու, կամ, այլ ուրիշ համադասական շաղկապներով, ապա նրանց միջև ստորակետ չի դրվում: Անշուշտ այս թյուրիմացությունը անհաջող ձևակերպելու արդյունք է:

5) Գ. Գաբրիելյան.—«Ստորակետը դրվում է՝ 1) Նախադասության համադոր անդամների միջև, երբ նրանք կապված չեն և, ու, ինչպես նաև կամ շաղկապներով... 2) Միմյանց հետ համադասական հարաբերությամբ կապված պարզ կամ բարդ նախադասությունների միջև, երբ նրանք կապված չեն և կամ ու շաղկապներով: Այս վերջին դեպքում ստորակետ դրվում է միայն այն դեպքում, երբ կապակցվող նախադասությունների ենթակաները նույնը չեն»:

Այս ձևակերպմամբ փորձ է արված ընդհանրացնել կանոնը՝ տարածելով այն ոչ միայն անխառն բարդ համադասական նախադասությունների վրա, այլև այն բաղադրարդ կառույցների վրա, որոնք բաղկացած են մեկ պարզ և մեկ բարդ ստորադասական կամ երկու բարդ ստորադասական նախադասությունների կապակցությունից, որի պատճառով էլ ինչ-որ չափով տուժել է կանոնի հստակությունը: Այնուհետև, երկրորդ կետի բացատրության մեջ և, ու շաղկապների շարքում հիշատակված չէ կամ շաղկապը, որից առաջ ստորակետ դնելու կամ չդնելու հարցը (երբ նրանով կապվում են նույն ենթակայով միավորված համադաս նախադասություններ) դեռ վերջնականորեն ճշտված ու կայունացված չէ: Բոլոր դեպքերում հանձնարարելի է նման կառույցներում հրաժարվել ստորակետի գործածությունից՝ այս խնդրում կամ շաղկապը հավասարեցնելով և, ու շաղկապներին, մանավանդ որ արդեն զգալի է ստորակետից խուսափելու միտումը:

6) Վ. Ավագյան.—«Ստորակետը դրվում է՝ ա) նախադասության բաղադրի անդամների, կրկնվող շաղկապների միջև... գ) Համադասական շաղկապներից առաջ (բացի և, ու, կամ, քե)...) դ) Տարբեր ենթականեր ունեցող այն համադաս նախադասությունների միջև, որոնք կապակցված են և, ու, կամ շաղկապներով»:

Նրանք կետերի տակ ամփոփված այս կանոններից յուրաքանչյուրը, առանձին վերցրած, ճիշտ չի ձևակերպված և շփոթի տեղիք է տալիս: Այսպես, ա) մի՞թե ստորակետ է դրվում նախադասության բաղադրի անդամների միջև, եթե նրանք կապված են և, ու, կամ շաղկապներով. գ) մի՞թե և, ու, կամ շաղկապներից առաջ ստորակետ չի դրվում, եթե նրանցով կապվում են տարբեր ենթականեր ունեցող համադաս նախադասություններ. դ) մի՞թե տարբեր ենթականեր ունեցող համադաս նախադասությունների միջև ստոր-

7 Ս. Աբրահամյան. Հայոց լեզու. Երևան, 1984, էջ 313—314:

8 Գ. Գաբրիելյան. Նշվ. աշխ., էջ 394—395:

9 Վ. Ավագյան. Հայոց լեզվի շարահյուսություն. Երևան, 1985, էջ 175:

րակետ շի դրվում, եթե նրանք ոչ միայն և, ու, կամ, այլև այլ համադասական շաղկապներով (իսկ, բայց, ասկայն և այլն) են կապված: Անշուշտ երեք կետերը միասնաբար իրար «օգնում են» շփոթը վերացնելու, սակայն կանոնարկման այս եղանակը մերժելի է: Այնուհետև, հեղինակը և, ու, կամ շաղկապների շարքին է դասում թե-ն, սակայն փաստերը անհերքելիորեն ապացուցում են, որ թե՛ համազոր անդամներ և թե՛ մանավանդ համադաս նախադասություններ կապակցելիս այդ շաղկապի առաջ ստորակետը դրեթե միշտ առկա է: Բացառություն են կազմում իմաստով սերտ ամբողջություն կազմող, ըստ էության միմյանց չհակադրվող բաղադրիչներով որոշ կապակցություններ, ինչպես՝ վաղ թե ուշ, լավ թե վատ և այլն:

Այսպիսով, եթե փորձենք ամփոփել և ընդհանրացնել ներկայացված խնդիրները քննարկման առարկա հարցի վերաբերյալ, ապա կունենանք հետևյալ պատկերը.

1. Նշված բոլոր հեղինակները համակարծիք են այն հարցում, որ տարբեր ենթակայությունով ձևավորված համադաս նախադասությունների միջև ստորակետի գործածությունը պարտադիր է՝ անկախ կապակցող շաղկապից:

2. Ընդհանուր ենթակայով և բազմակի ստորոգյալներով բարդ համադասական նախադասությունների բաղադրիչների կետադրման հարցում կարծիքները բաժանվում են. ըստ Գ. Սևակի ստորակետ չպետք է դնել միայն փայլակցող և շաղկապից առաջ, ըստ Մ. Աբեղյանի ու Գ. Գարեգինյանի՝ և, ու շաղկապներից առաջ, ըստ Ա. Ղարիբյանի ու Գ. Պարիսի՝ և, թե շաղկապներից առաջ, ըստ Ս. Աբրահամյանի՝ և, ու, կամ շաղկապներից առաջ, իսկ ըստ Վ. Ավագյանի՝ և, ու, կամ, թե շաղկապներից առաջ:

3. Տարակարծություններ են դրսևորվում նաև նախադասության համազոր անդամների կետադրման հարցում. այսպես, Մ. Աբեղյանը և Գ. Սևակը հանձնարարում են ստորակետ չդնել և, ու շաղկապներից առաջ, Ա. Ղարիբյանի ու Գ. Պարիսը՝ և, թե շաղկապներից առաջ, Գ. Գարեգինյանը և Ս. Աբրահամյանը՝ և, ու, կամ շաղկապներից առաջ, Վ. Ավագյանը՝ և, ու, կամ, թե շաղկապներից առաջ:

Ինչպես տեսնում ենք, տարակարծությունները վերաբերում են՝ այն հարցին, թե նախադասության համազոր անդամներ և նույն ենթակայով ձևավորված համադաս նախադասություններ կապակցելիս նշված համադասական ո՛ր շաղկապներից առաջ չպետք է ստորակետ դնել: Որոշ կետերում չհամընկնող հանձնարարականների առկայությունը մասամբ արդյունք է ոչ հստակ ձևակերպված կանոնների, մասամբ անուշադրության (երբ, օրինակ, հաճախ մոռանում են հիշատակել ու-ն, որը և-ի հոմանիշն է և նրա վիճակակիցը այս հարցում), մասամբ էլ լեզվական փաստերը անտեսելու (երբ և, ու, կամ շաղկապների շարքում հաճախ դասվում է նաև թե-ն, որով կապակցվող բաղադրիչների միջև ստորակետը գրեթե միշտ առկա է): Ինչ վերաբերում է կամ շաղկապի կետադրությանը, ապա այս դեպքում «մեղքի» հիմնական բաժինը ընկնում է լեզվական փաստերի վրա: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ այս շաղկապից առաջ (ինչպես և, ու, շաղկապների դեպքում) ստորակետ չի դրվում, երբ նրանով կապակցվում են նախադասության համազոր անդամներ (նկատի չունենք այս շաղկապի մեկնակալ իմաստային հարաբերությամբ կիրառությունները «այսինքն» շաղկապի նշանակությամբ, ինչպես՝ Զանգուն, կամ (=այսինքն) Հրադղանը սկիզբ է առնում Սեանա լճից): Սակայն երբ այս շաղկապով կապվում են ընդհանուր ենթակայով և բազմակի ստորոգյալներով ձևավորված համադաս նախադասություններ, ապա այս դեպքում պատկերը փոխվում է, և հավասարապես հանդիպում են ինչպես ստորակետով, այնպես էլ առանց ստորակետի կառույցներ (հենց նույն հեղինակի գործերում և նույնիսկ նույն էջում): Ընդհանուր գերակշռությունը, սակայն, թվում է, թե անստորակետ տարբերակի կողմն է, ընդհանուր միտումը՝ նույնպես: Ահա նման երկու օրինակ՝ Պառավն աշխատում էր նրան միշտ մի բանով զբաղեցնել, հին ժուռնալներ էր բերում, կամ թե բրինձ էր տալիս շոկելու (ԱՔԾ, 402): Երբեմն հարևանի երեխան

դալիս էր փայտ կտրատում վառարանի համար կամ ջուր բերում (ԱԲԾ, 405),

կամ շաղկապով կապված բաղադրիչների կետադրման հարցում տիրող այս անկայուն վիճակը, առկա տատանումները մասամբ արդյունք են այն հանդամանքի, որ քերականները ուշացած արձագանքեցին գրավոր խոսքում տիրող փաստական վիճակին: Այսպես Մ. Աբեղյանը և Գ. Սևակը, որոնց շարահյուսության դասագրքերը երկար տարիներ ուղեցույց են հանդիսացել բազմաթիվ սերունդների համար, կամ շաղկապը չեն դասել և, ու շաղկապների շարքը, թեև հենց իրենց հեղինակած դասագրքերում նրանցից առաջինը գրեթե միշտ խուսափել է ստորակետ դնելուց, իսկ երկրորդը ընդհանրապես ստորակետ չի դրել, երբ այդ շաղկապով կապվել են նախադասության համազոր անդամներ: Իսկ ինչ վերաբերում է ընդհանուր ենթակայով և բազմակի ստորոգյալներով կառույցներին, ապա Մ. Աբեղյանը առավել հաճախ կամ շաղկապից առաջ ստորակետ է դրել, իսկ Գ. Սևակը միշտ խուսափել է այդ նշանի գործածությունից: Ստացվել է այնպես, որ առաջարկվող հանձնարարականները և բուն հեղինակային լեզվի փաստերը ինչ-որ չափով հակադրվել են միմյանց:

Այն, որ երկար տարիներ կամ շաղկապը չի հավասարեցվել և, ու շաղկապներին, հավանաբար իր կաշկանդիչ դերը կատարել է, սակայն ոչ լիովին. գրավոր խոսքը, ենթարկվելով զարգացման ընդհանուր միտումին, համառոտեցն անտեսում էր հանձնարարականը, երբ խոսքը վերաբերում էր նախադասության համազոր անդամների կապակցմանը: Իսկ ինչ վերաբերում է նույն ենթակայով և բազմակի ստորոգյալներով ձևավորված համադաս նախադասությունների կապակցման դեպքերին, ապա, ինչպես ասել ենք, այս կառույցներում տատանումները խիստ զգալի են, սակայն, այնուամենայնիվ, հոգուտ անստորակետ տարբերակի: Ուստի և քերականների հետագա սերունդը (Ս. Աբրահամյան, Գ. Գարեգինյան, Վ. Ավագյան), նկատի ունենալով գրավոր խոսքում տիրող փաստացի վիճակը, զարգացման ընդհանուր միտումը և ձգտելով միօրինակություն հաստատել այս հարցում, կամ շաղկապը ևս դասեց և, ու շաղկապների շարքը:

Անշուշտ, նշված տատանումները մասամբ արդյունք են նաև լեզվական գործոնների ազդեցության: Այսպես՝ նկատելի է, որ առավել հաճախ կամ շաղկապից առաջ ստորակետ է դրվում ծավալուն (լրացումներով ծանրաբեռնված), քան ոչ ծավալուն համադաս նախադասությունների կապակցման դեպքում (համեմատի՝ «Ծրգում էր կամ պարում» և «Պետք է ամեն գնով ավարտես կիսատ թողած քո այս խիստ կարևոր աշխատանքը կամ պետք է խայտառակ լինես ընկերներիդ առաջ՝ խոստովանելով քո անկարողությունը»): Թվում է նաև, որ ստորակետի առկայությամբ կարծես էլ ավելի է ընդգծվում կամ շաղկապի արտահայտած փոխադարձ բացառման կամ ժխտման հարաբերությունը, նրա առկայությունը կարծես նպաստում է կապակցվող երկրորդ եզրի առանձնացմանը՝ հակադրվելու միտումով:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե բավական են արդյոք քերականների կողմից ներկայացված բացատրություններն ու հանձնարարականները կանոնավորելու համար ստորակետի գործածության կնճռոտ խնդիրը և, ու, կամ շաղկապներից առաջ: Անշուշտ ոչ: Եվ ոչ միայն նրա համար, որ որոշ կետերում դրանք իրարամերժ են, հետևաբար և միօրինականացմանը չնպաստող, այլ նաև այն պատճառով, որ նշված կանոնների տարածման կամ ազդեցության ոլորտից դուրս են մնում, ինչպես ասել ենք սկզբում, բավական մեծ թվով շարահյուսական կառույցներ՝ արտահայտված պարզ, բարդ կամ բազմաբարդ նախադասություններով: Նախ՝ բերված հանձնարարականները իրենց այդ ձևակերպմամբ կարող են վերաբերել միայն նախադասության համազոր անդամներին և այն բարդ համադասական նախադասություններին, որոնց բաղադրիչները նույն կամ տարբեր ենթակայներով ձևավորված երկկազմ համադաս նախադասություններ են, ըստ որում նույնիսկ այս դեպքում էլ, ինչպես կտեսնենք քիչ հետո, միշտ չէ, որ հնարավոր է, առաջնորդ-

վելով առկա հանձնարարականներով, կարգավորել կետադրության հարցը նշված շաղկապներից առաջ, և երկրորդ՝ չէ՞ որ այս շաղկապներով կարող են կապակցվել նաև՝

ա) նույն կամ տարբեր ենթատեսակների միակազմ նախադասություններ, ինչպես նաև որևէ միակազմ նախադասություն և որևէ երկկազմ նախադասություն:

բ) Հարցական, բացականչական և հորդորական (հրամայական) համադաս նախադասություններ, որոնց կետադրությունը ևս միօրինակ չէ:

գ) Համազոր այնպիսի անդամներ կամ ընդհանուր ենթակայով ձևավորված համադաս այնպիսի նախադասություններ, որոնց միջև շարադասված են երկու կողմից տրոհման (անջատման) ենթակա շարահյուսական միավորներ (կոշական, բացահայտիչ, միջանկյալ և ներդրյալ բառեր, բառակապակցություններ, նախադասություններ, տրոհվող ետադաս լրացումներ, երկրորդական նախադասություններ), այսինքն այնպիսի միավորներ, որոնք, անկախ և, ու, կամ շաղկապների առկայությունից, պետք է վերջից ստորակետով տրոհվեն:

դ) Հադակցական (այլ տերմինով՝ ճավելական) արժեք ունեցող բառեր, բառակապակցություններ, նախադասություններ:

ե) իսառ տիպի բազմարար համադասական նախադասության այնպիսի բաղադրիչներ, որոնցից առաջինը վերջադաս երկրորդական(ներ)ով բարդ ստորադասական նախադասություն է, իսկ երկրորդը՝ պարզ կամ բարդ ստորադասական նախադասություն՝ առաջադաս կամ վերջադաս երկրորդական(ներ)ով:

զ) Համասեռ երկրորդականներ՝ ստորադասված նույն գլխավոր(ներ)ին:

է) Համադաս գլխավորներ, որոնք ունեն ընդհանուր երկրորդական(ներ):

Թվարկված կառույցներում և, ու, կամ շաղկապներից առաջ ստորակետի գործածության (դնելու կամ չդնելու) հարցը առայժմ ըստ էության «կարգավորվում է» հիմնականում սուբյեկտիվ գործոններով՝ «անձնական ընկալմամբ», «անհատական մոտեցումով», որի հետևանքը պարզ է՝ անմիօրինակություն, խառնաշփոթ: Այս վիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է մանրակրկիտ քննության ենթարկել լեզվական փաստերը (հաշվի առնելով ինչպես գեղարվեստական, այնպես էլ լրագրահրապարակախոսական ու դիտական գրականության լեզուն), նկատի առնել ուրվագծվող միտումները, այս կամ այն կետադրական տարբերակի գործածության հաճախականությունը (ըստ որում առաջնությունը միշտ տալով այն տարբերակին, որը կանխում է որևէ հնարավոր փոփոխություն կառույցի ընդհանուր բովանդակության մեջ, նպաստում մտքի էլ ավելի հստակ արտահայտմանը, բացառում երկիմաստություններն ու երկդիմությունները), և այս բոլորը ընդհանրացնելով ու կանոնարկելով՝ մշակել և ներկայացնել հնարավորին չափ հստակ հանձնարարականներ՝ կարգավորելու համար և, ու, կամ շաղկապներով կապակցվող բաղադրիչների (անկախ նրանց կառուցվածքից, ծավալից ու բնույթից) կետադրությունը:

Ստորև մենք կներկայացնենք մեր նկատառումները քննարկվող հարցի վերաբերյալ՝ հիմնվելով փաստական համապատասխան նյութերի և երկար տարիների մեր դիտարկումների արդյունքների վրա: Քննության առարկա կդառնան առաջին շուրս կետեքում ամփոփված կառույցները: Սակայն նախքան նշված կառույցների քննության անցնելը հարկ ենք համարում անդրադառնալ այն բարդ համադասական նախադասություններին, որոնց բաղադրիչները տարբեր ենթականերով ձևավորված (կամ, այլ ձևակերպմամբ, ընդհանուր ենթակա չունեցող) երկկազմ նախադասություններ են: Թվում է, թե և, ու, կամ շաղկապներով կապված այս համադաս նախադասությունների կետադրությունը որևէ էական բարդություն չի ներկայացնում, եթե դրանք հանդես չեն գալիս որպես նույն գլխավորին ստորադասված համասեռ երկրորդականներ կամ ընդհանուր երկրորդական(ներ) ունեցող համադաս գլխավորներ: Սակայն, դրանով հանդերձ, այս դեպքում ևս հանդիպում են կա-

ոույցներ, որոնց կետադրությունը դեռ վերջնականապես միօրինականացված չէ և կարող է լրացուցիչ մեկնարանությունների կամ բացատրությունների.

1. Ստորակետը պետք է պահպանել (թեև այն շատ հաճախ բացակայում է) նաև այն դեպքերում, երբ առաջին համադասի ենթական կրկնվում է երկրորդ համադասում կամ էլ փոխարինվում է որևէ դերանվամբ կամ գոյականով, ինչպես՝ ծով կար նրա մտքում (,) և այդ ծովը ափ էր շարտում մերթ սև թավիշն գլխարկով մի գլուխ... (ԱՔԵ, 195)¹⁰, Գրողները ազատ մարդիկ են, և նրանք որևէ մեկի հետ չեն խորհրդակցում, թե որտեղ պիտի տպեն իրենց դրածը (Ավ.)։ Եվ այնուամենայնիվ դրանք օձեր են, և այդ օձերը փակեցին մեր ճանապարհը (ԽԴԻԿ, 211)։ Դերանվանական տարբերակներով՝ նա ամեն կերպ ամրապնդում էր այդ փառապանք ուսումնարանի հարուստ ավանդույթները, և ինքն էլ խորամուխ էր լինում դրանց մեջ (ՎԿԶ, 45)։

2. Նշված շաղկապները կարող են կապակցել նաև այնպիսի համադաս նախադասություններ, որոնք ձևավորված են եղանակավորիչ արժեք ունեցող միադիմի ձևերի (պետք է, անհրաժեշտ է, հարկավոր է, հնարավոր է, անհրաժեշտ է, կարելի է, անկարելի է, ցանկալի է, հաճելի է, դժվար է և այլն) և անհոդ կիրառված անոճող դերբայի կապակցություններով։ Նման կառուցվածք ունեցող համադաս նախադասությունները ըստ էության երկկազմ են¹¹, քանի որ այդ կապակցություններում անորոշ դերբայը ընկալվում է որպես ենթական։ Սակայն անկախ այն հանգամանքից, որ այդ երկկազմ համադաս նախադասությունները ձևավորված են անորոշ դերբայով արտահայտված տարբեր ենթականերով, նրանց միջև ստորակետ չպետք է դնել, երբ նրանք կապվում են և, ու, կամ շաղկապներով, ինչպես՝ Հարկավոր է նաև զենել հիվանդին և դրանից հետո միայն կարելի է դառնել նրա առողջական վիճակի մասին։ Այստեղ հնարավոր չէ երկար մնալ և անհրաժեշտ է այլ օթեան որոնել, Դժվար է համաձայնել այդ կարծիքին և անհնարին է շնակաճառել։ Հնարավոր է այդ աշխատանքը կատարել և կարելի է նույնիսկ սկսել նախագծման աշխատանքները։ Հարկավոր է որակյալ աշխատանք կատարել կամ հարկ է հրաժարվել պատվերից։

3. Հաճախ է պատահում, որ նույն կառույցի կազմում միավորվում են երեք և ավելի համադաս նախադասություններ՝ համընկնող և չհամընկնող (այսինքն՝ ընդհանուր և ոչ ընդհանուր) ենթականերով։ Այս դեպքում և, ու, կամ շաղկապների կետադրությունը ճշտելիս հաշվի են առնվում այն համադաս նախադասությունները, որոնք անմիջականորեն կապված են այդ շաղկապներով և որոնք գերազանցապես վերջնական են լինում, ինչպես՝ Դիմեցի արդուկի ու ասեղի օգնությունը, բայց դա, իհարկե, քիչ էր, և ես ափսոսանքով մտածեցի, որ համազգեստի մասին պետք էր ավելի շատ մտածել (ԲԱՄՀՀ, 72)։ Այս օրինակում թեև առաջին և երրորդ համադասները նույն ենթակայով (ես) են ձևավորված, սակայն քանի որ անմիջականորեն և շաղկապով կապված 2-րդ և 3-րդ համադասների ենթակաները տարբեր են (դա և ես), ուստի նրանից առաջ ստորակետ է դրված։ Հակառակ պատկերն է հաջորդ օրինակում, ուր և շաղկապից առաջ ստորակետը բացակայում է, քանի որ անմիջականորեն նրանով կապված երրորդ և չորրորդ համադաս նախադասությունների ենթական (թեկուզ և զեղչված) ընդհանուր է, ինչպես՝ գլուխս ցավում է, մարմինս թուլացած է, (ես) անընդհատ հազում եմ և (ես) հարբուխ ունեմ։

Այժմ անցնենք առաջին շորս կետերում ամփոփված և, ու, կամ շաղկապներով կառույցների քննությանը, որոնց կետադրության վերաբերյալ, ինչպես ասել ենք, բացակայում են որոշակի ու հստակ հանձնարարականներ։

¹⁰ Փակագծերի մեջ առնված ստորակետը բնագրում բացակայում է։

¹¹ Այս կառույցների վերաբերյալ կա նաև այլ կարծիք, ըստ որի նման կապակցությունները գիտվում են որպես անդամ (միակազմ) նախադասություն ձևավորող միասնական բաղադրյալ ստորոգյալ (տե՛ս. Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բադիկյան. Ժամանակակից հայոց լեզու. հ. 3, Երևան, 1976, էջ 161—162)։

Այդ է պատճառը, որ այդ կառույցների կետադրությունը միօրինականացված չէ և «կարգավորվում է» անհատական մոտեցմամբ կամ անձնական պատկերացմամբ:

Ա. Եվ, ու, կամ շաղկապներով կարող են կապակցվել նաև՝

ա) Որևէ միակազմ և որևէ երկկազմ նախադասություն: Այս դեպքում հարցը կարգավորվում է մեզ հայտնի այն կանոնով, ըստ որի նշված շաղկապներից առաջ ստորակետ է դրվում, երբ նրանցով կապված համադաս նախադասությունները ընդհանուր ենթակա չունեն: Պարզ է ուրեմն, որ այս կառույցներում ստորակետի գործածությունը պարտադիր պետք է համարել, ինչպես՝ *Խաղաղ էր, և կեսգիշերին վերադարձանք Իջևան (ԳԹ): Յուրտ է, և արդեն քաղցած եմ (ԳԹ): Արդեն անձրևում է, և նա դեռ թափառում է փողոցներում: Մթնեց, և ես շտապեցի տուն: Յուրտ, ձմեռ, սառնամանիք, և միայն նապաստակներն են երբեմն երևում տափաստանում: Նորից քրքիշ, և մենք պարտված հեռանում ենք (ՔՀ, 363): Մի թույլ շփում բոցի, և նավթամբարը պիտի պայթեր (ՇԲ, 363): Վերջին երկու օրինակներում համադասված են միակազմ անվանական անդամ և երկկազմ նախադասություններ, որոնք սովորաբար նշում են գործողության արագ փոխանցում և հաճախ էլ՝ անսպասելի արդյունք: Ահա այս վերջին նշանակությունը շեշտելու համար հաջորդ օրինակում ստորակետի փոխարեն օգտագործված է բուլբ. որ խրախուսելի չէ, ինչպես՝ Մի զնդակ՝ և Մհե շաուշը փովեց մեր թաքստոցի առաջ (ԽԴՆԿ, 215):*

բ) Նույն կամ տարբեր ենթատեսակների միակազմ նախադասություններ: Այս դեպքում այդ բաղադրիչների կետադրությունը ճշտելիս պետք է նկատի ունենալ հետևյալը.

1) Երբ նույն կառույցի կազմում միավորվում են նույն ենթատեսակի միակազմ նախադասություններ, ապա այդ շաղկապներից առաջ ստորակետ չպետք է դնել, ինչպես՝ Մթնեց և խսկույն ցրտեց: Մութ է և ցուրտ է: Տոն է և ուրախություն է: Ժամերով զնում ես, զնում և ոչ մի մարդու չես հանդիպում: Վերջին տասնամյակներին աննախընթաց թափ առավ շինարարությունը Երևանում. լայնահուն մայրուղիներ կառուցեցին և ճարտարապետական հույակապ կոթողներ կերտեցին: Լուծություն, խաղաղություն և միայն թուղունների ժլվուց: Բարձրացնել խարսխները և պատրաստվել նավարկության:

2) Սակայն երբ նույն կառույցի կազմում միավորվում են տարբեր ենթատեսակների և տարբեր տիպերի միակազմ նախադասություններ, ապա ստորակետի գործածությունը նշված շաղկապներից առաջ պետք է պարտադիր համարել: Այսպիսով, և, ու, կամ շաղկապներից առաջ ստորակետ է դրվում, երբ նրանով կապակցվում են՝

ա) Որևէ միակազմ անդամ նախադասություն և որևէ միակազմ դիմավոր նախադասություն, ինչպես՝ Յուրտ, ձմեռ, սառնամանիք, և անընդհատ ձյունում է, ձյունում: Տեղատարափ անձրև, ջրափոսեր, ցեխակույտեր, և այս անտանելի եղանակին շենքեր են կառուցում, շինարարություն են ծավալում, փողոցներ են ասֆալտապատում: Տոթ, կիզիչ արև, խեղդով օդ, և տանջահար ու հյուծված՝ զնում ես, զնում անվերջանալի փոշոտ ճանապարհներով:

բ) Տարբեր տիպերի պատկանող դիմավոր միակազմ նախադասություններ, ինչպես՝ Անձրևում է, և փողոցներում դեռ հանգիստ զբոսնում են, անշտապ քայլում, զրուցում: Տեղատարափ անձրև է, և հրապարակում դեռ շարունակում են պարել, խաղեր կազմակերպել, զվարճանալ: Տոն է, ցնծություն է, և չես կարող անտարբեր մնալ, շմանակեցել ընդհանուր ուրախությանը: Մթնեց, և լուծություն է, խաղաղություն, անդորրություն:

Բ. Եվ, ու, կամ շաղկապներից առաջ ստորակետ չպետք է դնել, երբ նրանցով կապվում են հարցական, հռչակական (հրամայական) և բացականչական նախադասություններ՝ անկախ նրանց երկկազմ կամ միակազմ լինելուց, նույն կամ տարբեր ենթականերով ձևավորված լինելուց:

Հարցական նախադասություններ՝ *ինչպիսի՞ հույսեր ունեն հայ ժողովուրդը և ինչպե՞ս դաժանորեն խաբեցին նրան (ԽՀ)*: Սակայն թուղթն *ինչո՞ւ է ճմրթված և խունացած են դույնները (ՀԶ)*: Բայց չէ՞ որ ես հիմար եմ և մի՞թե արժե նեղանալ *ինձնից (ՆԴ, 310)*: Ինչո՞վ զինվել, *ինչի՞ց պետք է վերջնականորեն հրաժարվել և ի՞նչը պետք է հաղթահարել...* (ՍՀ): Հաջորդ երկու օրինակներում նույն հեղինակը նույն հոգվածում նույն կառույցը տարբեր ձևով է կետադրել. համեմատիր՝ ...*Ովքե՞ր կարող են զբաղվել դրանով, և ինչպե՞ս են լուծվելու հումք ձեռք բերելու, պատրաստի արտադրանքն իրացնելու խնդիրները (Ավ.)*: Ի՞նչ է իրենից ներկայացնում «Անհատական աշխատանքային գործունեության մասին օրենքը, ի՞նչ հիմնական նպատակ է հետապնդում և որո՞նք են դրա հիմնական սկզբունքները (աեդ):

Հորդորական (հրամայական) նախադասություններ՝ Թող բախտը միշտ ժպտա քեզ և թող հաջողությունը անպակաս լինի քեզանից: Թող նրա հիշատակը անթառամ մնա և թող նրա անունը հավերժ հիշվի: Թող երջանկությունը ուղեկցի քեզ և թող խաղաղ լինի քո կյանքի ճանապարհը:

Բացականչական նախադասություններ՝ Որքա՞ն գեղեցիկ է այստեղ բնությունը և ինչպիսի՞ գեղեցիկ ծաղիկներ կան սարալանջերին: Որքա՞ն բարի է նա և ինչպե՞ս են նրան պաշտում ընկերները:

Գ. Նախադասության համազոր անդամների, *ինչպես նաև ընդհանուր ենթակայով ու բազմակի ստորոգյալներով ձևավորված համադաս նախադասությունների կապակցման դեպքում, ինչպես հայտնի է, նշված շաղկապներից առաջ ստորակետ չի դրվում, եթե այդ համազոր բաղադրիչների միջև առկա չեն տրոհման ենթակա լեզվական միավորներ, ինչպես՝*

ա) Համազոր անդամների կապակցման օրինակներ՝ Գարնանային առավոտը խոստանում է պայծառ և տեւոտ օր (ԱՐՆ, 117): Թատրոն կոչվածը մի քառակուսի անոն ու աննաշակ սրահ էր (ՇՔ, 72): Այս հարցում թող քեզ օգնի Սուրենը կամ Վարդանը:

բ) Համադաս նախադասությունների կապակցման օրինակներ՝ Կինը կողմից հանեց պնակները և ծաղկավոր բաժակները շարեց սփռոցի վրա (ԱՐՆ, 194): Հետո սթափվեց ու քայլերն ուղղեց դեպի մատուռը, կոացավ և կուզեկուզ ներս մտավ... (ԱՐՆ, 65): Անդամալուծն ուրախ չէր եղբոր հաղորդած լուրից կամ գուցե թաքցրեց ուրախությունը (ՇՔ, 104):

Սակայն երբ այդ համազոր բաղադրիչների միջև, անմիջապես նշված շաղկապներից առաջ, առկա են երկու կողմից տրոհման ենթակա լեզվական միավորներ (կոչական, բացահայտիչ, միջանկյալ և ներդրյալ բառեր, բառակապակցություններ, նախադասություններ, տրոհվող ետադաս լրացումներ, երկրորդական նախադասություններ), ապա այս դեպքում նշված շաղկապներից առաջ պետք է պարտադիր համարել ստորակետի գործածությունը: Այլ կերպ ասած, հարցը պետք է կարգավորել այն ընդհանուր և հայտնի օրենքով, ըստ որի տրոհման ենթակա միջադաս լեզվական միավորները երկու կողմից պահանջում են տրոհության նշաններ (բուժ և ստորակետ կամ՝ երկու կողմից ստորակետ): Բերենք համապատասխան օրինակներ՝ խմբավորելով դրանք ըստ կապակցվող բաղադրիչների տեսակի՝ ա) համազոր անդամների և բ) համադաս նախադասությունների:

1. Կոչականի առկայությամբ՝

ա) Ընդմիջումին ես չկարողացա մոտենալ ձեզ, ընկե՛ր Համբարձումյան, և հարցնել ձեր եղբոր առողջական վիճակի մասին: Այսօր երեկոյան, սիւրե՛լի՝ Սուրեն, կամ ամենաուշը վաղը այդ հարցը կպարզվի: Դպրոցի ակումբում, երեխանե՛ր, ու այնուհետև պիտեներական պալատում հանդիսավորությամբ կնշվի այդ փառապանծ տարելիցը:

բ) Նա ժամանակին հայտնել է ձեզ այդ մասին, ընկե՛ր Վարդանյան, և խնդրել է ամեն կերպ օգնել այդ ծանր վիճակից դուրս գալու համար: Բարեխղճորեն կատարի՛ր պարտականությունդ, Սուրեն՛, կամ հրաժարվի՛ր այդ պաշտոնից: Մոտեցե՛ք, երեխանե՛ր, և ուշադիր լսե՛ք առաջադրանքը: Նա

անպայման կզանգահարի քեզ, Ստեփան, կամ կաշխատի հանդիպել քեզ գրադարանում:

2. Բացառապատիժի առկայությամբ՝

ա) Նրա հետ գնում էին պառավ մայրը՝ Մարան նսնը, և հեղահամբույր կինը՝ Վարդիշաղը (ՍՋԵԺ, 117): Մի քանի տարի անց նա իր բանաստեղծություններում սիրով կհիշի բարի դայակին և տատին՝ Մարիա Ալեքսանդրային, և գլուղում անցկացրած այդ օրերը (Ավ.): Իսկ ես, որպես ռազմաճակատի զորհրդի հրամանատարի տեղակալ, և թյունիզսերգի վրա գրոհը նախապատրաստելու գործին ակտիվորեն մասնակցած զորախմբի շտաբի մի քանի զեներալներ ու սպաներ պետք է օպերացիան անցկացնելիս օգնեինք ռազմաճակատային հրամանատարությանը (ԲԱՄՀՀ, 690):

բ) Դիրեկտորը կանչեց իր գործընկերներին՝ Վարդանյանին, Հովհաննիսյանին, և Արամյանին՝ միևնույն ժամանակահատվածում ներկայացուցչին, առաջարկեց միասնաբար քննել ստեղծված իրադրությունը: Ով չէր ճանաչում Մարկոս Ալիմյանին՝ այդ վաթսուներեք տարեկան աշխույժ ծերունուն, և չէր լսել նրա կյանքի յուրօրինակ պատմությունը (ԹՆԺ, 417):

Պետք է նկատի ունենալ, որ ստորակետի բացակայությունը բացահայտիչներից հետո՝ նշված շաղկապներից անմիջապես առաջ, կարող է փոխել նախադասության բովանդակությունը, այն ոչ ճիշտ ներկայացնել, եթե այդ շաղկապներին հաջորդեն բացահայտիչների հոլովածևով արտահայտված այլ անդամներ, որոնք այս դեպքում կարող են նույնպես ընկալվել որպես բացահայտիչներ, ինչպես՝

Վահրամի հորեղբոր տղաները՝ Վարդանը, Վահրինը (,) և Արամը օգնեցին ինձ: Կանչիր հորեղբոր տղաներին՝ Վարդանին, Վահրինին (,) կամ Արամին: Ինչպես տեսնում ենք, ստորակետի առկայությամբ Արամը բացահայտիչ չէ, այլ ենթակա (1-ին օրինակում) և ուղիղ խնդիր (2-րդ օրինակում)՝ համադասված ոչ թե Վարդանը, Վահրինը բացահայտիչներին, այլ տղաներ ենթակային (1-ին օրինակում) և տղաներին ուղիղ խնդրին (2-րդ օրինակում), հետևաբար և ստորակետի առկայությամբ Արամը Վահրամի հորեղբոր տղան չէ, իսկ ստորակետի բացակայությամբ նրա հորեղբոր տղան է: Նախադասության բովանդակությունը կարող է փոխվել նաև բ) կետի օրինակում, եթե համազոր բացահայտիչներից հետո (Վարդանյանին, Հովհաննիսյանին)՝ և շաղկապից անմիջապես առաջ, ստորակետ չդնենք: Այս դեպքում Արամյանը ևս կընկալվի որպես բացահայտիչ, այսինքն որպես դիրեկտորի գործընկեր: Այլ կերպ ասած, ստորակետի առկայությամբ նու միայն միևնույն ժամանակահատվածում ներկայացուցիչ է ընկալվում, իսկ ստորակետի բացակայությամբ՝ նաև որպես գործընկեր: Այս փաստերը ցույց են տալիս, թե որքան կարևոր է հստակ ու որոշակի կետադրական կանոնների ու հանձնարարականների մշակումը գրավոր խոսքի համար, առանց որի այն զրկվում է անհրաժեշտ ճշգրտությունից ու հստակությունից:

3. Միջանկյալ ու ներդրյալ բառերի, բառակապակցությունների ու նախադասությունների առկայությամբ՝

ա) Այս երեք հոդվածները, ինչպես ասել ենք, և նշված մենագրությունը լուրջ ներդրում են հայագիտության գանձարանում: Այդ վիթխարի գործի կարող են դեկավարել Արամ Վարդանյանը, ոչ մի կասկած չունեմ դրանում, և նրա եռանդուն տեղակալը:

բ) Նրա աշխատանքից մենք շատ գոհ ենք, իմարկե, և պահանջում ենք այսուհետև ևս նրան վստահել պատասխանատու խնդիրներ: Այդ կամրջի շինարարությունը այնքան էլ հեշտ գործ չէ, ինչպես պնդում են շատեր, և պահանջում է լարված ու քրտնաջան աշխատանք: Նա այդ ծառից մի ճյուղ պոկեց, հավանորեն ձեռնափայտի համար, և դանդաղ վերադարձավ գլուղ... (ԽԴՌԿ, 40):

4. Տրոնվող ետադաս լրացումների առկայությամբ՝

ա) Երեխաները, մեծ ու փոքր, և նրանց ծնողները վազում էին ճանապարհի երկայնքով: Մի ուրիշ մարդ՝ լրիվ րախինքի մեջ կուրած, և նրա կինը

փորձում էին քարշ տալ ծառի բունը: Մի թռչուն՝ նման անտառաբնակ բուփ, և նրա ձագերը տագնապի ձայներ էին արձակում: Կանաչազարդ դաշտավայրը՝ ցողված վաղուդյան մարգարիտներով, և լեռնալանջի թփուտները՝ զարդարված բազմագույն ծաղիկներով, վառվում էին ծիածանի ամենանուրբ դուլներով: Նման տրոհվող հտադաս որոշիչները գերադասելի է առաջադաս որոշյալից բուժով անջատել, իսկ հաջորդող բառերից՝ ստորակետով:

բ) «Համլետի» հետ հենց այդպես էլ վարվել է Երևանի կամերային թատրոնը, բեմադրիչ Արա Երեզկյանի ղեկավարությամբ, և մեծ հաջողությամբ հասել իր հետապնդած նպատակին (ԱՀ): Հեղինակը ընդունում է մասնական բացահայտիչի գոյությունը՝ համարելով այն բացահայտիչի մի անսակը, և սահմանում հետևյալ կերպ...: Նա վախից գոռգոռաց և երբ արթնացավ, նկատեց, որ գտնվում է հատակին, անկողնու մոտ թավալված, և համոզվեց, որ այս ամբողջ տեսարանը մղձավանջ է (ԹՆԺ, 413): Նրա վիթխարի հարթությունը խաղաղ պահերին ծածկվում է բյուրեղյա կեղևով՝ առանց որևէ կնճռի, և առավոտյան դեմ նմանվում է հսկայական ողորկ հայու (ԹՆԺ, 413): Այս դեպքում ևս գերադասելի է տրոհվող լրացումները առջևից անջատել բուժով, իսկ վերջից՝ ստորակետով:

5. Երկրորդական նախադասությունների առկայությամբ՝

Պարզ նախադասության համազոր անդամների կամ նույն ենթակայով ձևավորված համադաս նախադասությունների միջև կարող է հանդես գալ առաջադաս համազոր անդամին կամ առաջադաս համադաս նախադասությունը ստորադասված որևէ երկրորդական նախադասություն: Այս դեպքում ևս այդ համազոր բաղադրիչները կապակցող և, ու, կամ շաղկապներից առաջ ստորակետի գործածությունը պետք է պարտադիր համարել:

ա) Հայ, ինչպես և օտար լեզուների քերականությունների մեջ նախադասության անդամները բաժանվում են երկու խմբի՝ գլխավոր անդամներ, որոնք են ենթական և ստորոգյալը, և երկրորդական անդամներ: Վերջիններս իրենց հերթին բաժանվում են երկու խմբի՝ ենթակայի կամ գոյականական անդամների լրացումներ, որոնք են որոշիչը, հատկացուցիչը և բացահայտիչը, և ստորոգյալի կամ բայական անդամի լրացումներ, որոնք են խնդիրներն ու պարագաները¹²: Մեր հին դասարանի թատրոնասեր աղջիկներից մի քանիսը, որ արդեն սովորում են Երևանի բուհերում, և ես, որ դեռ դպրոցական եմ, որոշում ենք այցի գնալ Արուս Ոսկանյանին (ՀՀՈԱ, 165): Մենք գրտնում ենք, որ այն օգնությունը, որ մեզ արվելու է, կամ այն միջոցները, որ հատկացվում են դրա համար, դումարվեն և ի սպաս դրվեն այնպես, որ այն դառնա փոխշահավետ (ԽՀ):

բ) Չնկատեցի, թե ինչպես նիհար հաղթեց ինձ, ու ես այդ քարին ընկած քնեցի (ԽԴՈՎ, 32): Անցանք վանքի ընդարձակ բակը, ու մի ֆանի ճին գերեզմաններ կային, և մեր քոլոզները ուղղելով, իջանք դեպի Ավարայրի դաշտ (ԽԴՈՎ, 237): Կասպարովի մայրը՝ Կլարա Շահենովնան, ուրախացավ, որ ժամանել է Գաբրիի վաղեմի երկրպագուն, և խոստացավ անձամբ մեքենագրել պաշտոնական տոմսը (ԱՎ.):

¹² Մ. Ա ս ա տ Ր յ ա ն. Ժամանակակից հայոց լեզու, Շարահյուսություն. Երևան. 1987, էջ 146:

Այս կառույցներում ևս հնարավոր են դեպքեր, երբ ստորակետի առկայությունը կամ բացակայությունը նշված շաղկապներից առաջ կարող է փոխել նախադասության ընդհանուր բովանդակությունը, ինչպես՝ իմ դասընկերները, որոնք են ժիրայրը, Մնացականը (,) և քեզ լավ ծանոթ Տիգրանը, համոզված եմ, կօգնեն քեզ: Ստորակետի բացակայությամբ Տիգրանը բացահայտվել է դառնում, հետևաբար և դասընկեր է ընկալվում, իսկ ստորակետի առկայությամբ բացահայտվել է, ուստի և դասընկեր էլ չէ (տե՛ս նաև բ) կետի առաջին օրինակը, ուր «ես արդեն քարին ընկած քնեցի» ինքնուրույն համադաս նախադասությունը ստորակետի բացակայությամբ ընկալվում է որպես գլխավորին ստորադասված ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն՝ համադասված արդեն ոչ թե գլխավորին, այլ «թե ինչու նիրհը հաղթեց ինձ» երկրորդականին):

Դ. Հաբակցական նշանակությամբ բառերի, բառակապակցությունների և նախադասությունների կապակցության դեպքեր.

Ստորակետ պետք է դնել նաև և, ու, կամ շաղկապներով սկսվող և հաբակցական արժեք ունեցող բառերից, բառակապակցություններից և նախադասություններից առաջ, այսինքն այնպիսի շարահյուսական միավորներից առաջ, որոնք հնչերանգով և որոշակի դադարով առանձնանում են նախադասության հիմնական մասից կամ նախադասությունից՝ խոսքի պահին անսպասելի հիշված և կարևոր համարվող որևէ փաստ, իրողություն, մանրամասնություն, առավել հաճախ եզրակացություն, հետևություն արտահայտելու համար: Նման շարահյուսական միավորները լրացուցիչ հաղորդման նշանակություն են ունենում և հաճախ հիմնական նախադասությունից, որի մտքի զարգացմանն են ծառայում՝ ճշտելով և լրացնելով այն, անջատվում են նաև վերջակետով:

Ներսն արդեն բավական մարդ կա, և բոլորն անձանք (ԱԶԾԺ, 346).— ինչպես չեք ամաչում, և դեռ կուտուրակա՞ն էլ տեսք ունե՞ք,— հանդիմանում է ինձ վերարկուին սևագորշ աղվեսի մորթի գցած մի կին (ԱՎ.): Նա ընկերոջը դիտողություն արեց, և իրավունք էլ ուներ: Այդ աշխատանքը հարկավոր է ավարտել, և այն էլ ժամկետին: Պետությանն է հանձնվել երկու հազար տոննա միս, և գլխավորապես տավարի: Նա ինձ դիտողություն արեց, և շատ խիստ:

Ավարտելով այս փոքրիկ քննությունը՝ հիշեցնենք, որ և, ու, կամ շաղկապներով այս շորս կառույցները գրավոր խոսքում միօրինակ, միասնական կետադրություն չունեն. նշված շաղկապներից առաջ նույնատիպ շարահյուսական կառույցներում մերթ ստորակետ է դրվում, մերթ ոչ, և մեր այս հոգվածը մի փորձ է համապատասխան հանձնարարականների և առաջարկների օգնությամբ կարգավորելու այս լուրջ թերությունը:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐԱԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲԵ—Ակսել Բակունց, Երկեր, Երևան, 1955.

ԲԱՄՀՀ—Հովհաննես Բսուրամյան, Այսպես մենք հասանք հաղթանակի, Երևան, 1979.

ԲՀՍԶ—Բաղիշ Հովսեփյան, Սերմնացանները չվերադարձան, Երևան, 1962.

ԹՆԺ—Ա. Ամիրյան, Տ. Էլայան, Հ. Մխիթարյան, Թելադրության նյութերի ժողովածու, Երևան, 1977.

- ԽՆԻՎ — Խաչիկ Դաշունց, Ոսկաբունի կանյւր, Երևան 1984:
 ՀՀՈԱ — Հրաչյա Հովհաննիսյան, Ոսկե ամպ, Երևան, 1984:
 ՀՄԵ — Հրանտ Մարտոսյան, Երկիր, հ. 1-ին, Երևան, 1985:
 ՆԳ — Նար-Ղազ, Երկրի ինտատառ ժողովածու, հ. 6-րդ, Երևան, 1946:
 ՇՔ — Ալ. Շիրվանզադե, Քառս, Երևան, 1954:
 ՍԶ — Ստեփան Չաքուբե, Երկրի ժողովածու, հ. 3-րդ, Երևան, 1961:
 ՎԿԶ — Վլադիմիր Կառլով, Զորավարը, Երևան, 1987:

ԼՐԱԳՐԵՐ

- ԱՎ. — Ավանյան
 ԳՔ — Գրական թերթ
 ԽՀ — Խորհրդային Հայաստան
 ՀԶ — Հայրենի ձայն
 ՍՀ — Սովետական Հայաստան

О НЕКОТОРЫХ СПОРНЫХ СЛУЧАЯХ ПУНКТУАЦИИ
 В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Доктор филол. наук Г. Л. ГАРЕГИНЯН

Резюме

В статье рассматривается ряд синтаксических конструкций, составляющие части которых соединяются одиночными союзами *և*, *ու* (и), *կամ* (или). В частности, рассматриваются те случаи, когда этими союзами связываются односоставные предложения одного и того же или разных типов, вопросительные, повелительные и восклицательные предложения, однородные члены и сочиненные предложения с общим подлежащим, между которыми расположены синтаксические единицы, подлежащие обобщению, и другие. Пунктуация в этих конструкциях двойкая и не унифицированная (перед этими союзами запятая то ставится, то не ставится). Сделана попытка соответствующими правилами и рекомендациями устранить пунктуационный разнобой в этих конструкциях.